ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՎԱՆԱՆԴԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
МАРЗ МАВИРА
МУНИЦИПАЛИТЕТ ВАНАНДА

Թիվ 37

«28» 04 2014 թ.

Արմավիրի մարզ գ.Վանանդ

հեռ.(0233) 6 - 12 - 22

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզի մարզպետ
պարոն Ա. Ղահրամանյանին

Հարգարժան պարոն մարզպետ

Ի պատասխան Ձեր 10.04.2014թ. N 01/02.1/1217-14 գրության հայտնում ենք, որ Արմավիրի մարզպետարանի կողմից վարչական հսկողության շրջանակներում Վանանդի գյուղապետարանում հայտնաբերված խախտումները քննարկվել են 2014թ ապրիլի 28-ի արտահերթ նիստում :

Հանձնաժողովի կողմից հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ ձեռնարկվել են հետևյալ միջոցառումները.

1) Համայնքի ղեկավարի իրավական ակտերը ուղարկվել է համայնքի ավագանու անդամներին:
2) Աշխատանքային կարգապահական ներքին կանոնակարգը աշխատակազմի աշխատակիցներին պատշաճ կերպով իրազեկվել է:
3) Կամավոր լիազորությունների իրականացման կարգը և անհրաժեշտ ֆինանսական միջոցները, համայնքի կողմից մատուցվող ծառայությունների դիմաց գանձվող վճարների դրույքաչափերը և բնակավայրի քաղաքաշինական կանոնադրությունը կներկայացվեն համայնքի ավագանու հաստատմանը 2014թ մայիսի 26-ին կայանալիք հերթական նիստին:

4) Համայնքի սեփականության ամենամյա գույքագրում կկատարվի 2014թ. նոյեմբերի 17-ին

Կանանչ
համայնքի ղեկավար Զ. Մանուկյան